Հնռ
1341

ou

1999

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԵՒ ԽՐԱՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

ցաւոյն նորոգ ծագելոյ յաշխար-
հին հնդկաց և երևելոյ ՚ի զանազան
աշխարհս. որ անուանեալ կոչի՝
կոլերամօրպուս:

Աշխատասիրեալ ՚ի համառօտութեան բժշկէ [illegible]
՚ի բժշկական [illegible] Անգղիացւոց ՚ի Կալ-
կաթայ ՚ի տպարան [illegible] [illegible] [illegible]:

Յամի Տն 1823. և հայոց 1272. յամսեանն
օգոստոս 22.

՚Ի Թիֆլիզ Քաղաքի.

՚Ի Նորաբողբոջ Տպարանի Նորակերտ Ու-
սումնարանի Հայոց ընծայեցելոյ ՚ի Քաջա-
տոհմիկ ազնիւ Գէորգայ երեմեան արծրու-
նւոյ վանեցւոյ վերաբնակեցելոյ ՚ի Թիֆլիզ:

1257



Հֆ. 1344

1341-60

Սորին բարձր Արքայնութեան Տեառն Սեր-
ովսի գերիմաստ Մ.ըհի Եպիսկոպոսի գե-
րագահ Աթոռոյն ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ. և Նո-
րին բարձրագոյն խորհրդարանի բարեկարգութեան կա-
ռավարիչ Արղութեան ժողովոյն նախապատիւ Անդա-
մոյ. և Կաւալերի ռուսաց սրբոյն Աննայի առաջն-
երորդ աստիճանի. և այլոց Կայսերապարգև նշա-
նաց կրողի. և առաջնորդի և ծայրագոյն կառավար-
չի հոգևորական գործոց հայոց վրաստանեայ. և այ-
լոց.

խոնարհաբար ընծայումն.

Արքայնագոյն Հայր

Ի մէջոցի բաւական ժամանակաց. յորս
ի բերման գործոյ իմոյ դեդերեցայ
ես աստ ընդ հովանաւորութեամբ ձերդ Արքայնութեան.
փայելելով զգերագանց մարդասիրութեան ձերոյ
զշնորհս 'ի վեր քան զիմ արժանաւորութիւն, ըղձալի ա-
ռեալ իմ.քաջ զազգասինաւ ընտանութեանց սրբազնու-
թեան ձերոյ, որում տիւ և գիշեր անխոնջ տարժա-
նիք, անդուլ վաստակէք, և երկայնամիտ հոգունա-
կութ ամենաձիր հայթայթէք վասն բարեկարգութեան
պայծառութեան և լուսաւորութեան ազգի և եկեղե-
ցւոյ հայաստանեայց. 'ի դէպ վարկայ արտադրել

ըզ

զոյն զայս փոքրիկ տետրակ ծանօթութ՟ե և կերպի ապաքինման նորածանօթ դժնդակ ցաւոյ իմ հիւանդութ՟են խոլերամորբուս կոչեցելոյ, օգտակար և միանգամայն կարևոր համարեալ զոյն ազգի մերում սփռելոյ ՟ի բազում աշխարհս. զոր և ջերմեռանդութ՟բ հոգւոյ վերընծայեալ բարձր Սրբազնութեան ձերում, ակնունիմ թէ՝ և ձեր Սրբազնու՟ի կարևոր դատեսցի տպագրութ՟բ 'ի լոյս ընծայել. ապա թէ ոչ՝ բարեհաճու՟ի ը՟ս կամաց ձեր եղիցի. Ես տակաւին բաւականացեալ այնու, եթէ Սրբազնութիւն ձեր ընկալցի զոյն իբրև պտուղ ջերմեռանդութ՟ե հոգւոյ իմոյ՝ մնամ ո՟պ եմ, նովին ջերմեռանդութեամբ

Բարձր Սրբազնութ՟ե ձերում

'Ի Թիֆլիզ.
Յուլիսի 15.
1823 Յամի Տ՟ն.

ամենախոնարհ ծառայ
Գաւրիլ Ձերաշեան գա-
ւառաց բժիշկ խորհեցի :
Ալա

## Ահա համառօտի ճառեալք ընթերցողաց ցայտաբարութիւն։

Յաղագս ցաւոյն կամ հիւանդութեան՝ զորմէ են բանք տետրակիս, կարեւոր վարկուցեալ նախապատուել զսակաւ ինչ գիտելեաց. ասեմ նախ առաջին զանուանէ նր. որ ասի խոլերամօրբուս. և է բառ յունական տառադարձեալ 'ի լատին բարբառ, և թարգմանի մաղձաթափութի կամ մաղձահեղութիւն. որ է անուն վաղնջական յատկացեալ ցաւոյ ինչ, որով մարդ անդադար փըսխէ և լուծանէ զլոկ մաղձ. և վն նմանակցութեան ընդ այսմ ցաւոյ ըստ ինչ ինչ մասանց և յատկութեանցն, նոյն անուն եդաւ և սմա։

Արդ՝ այս ցաւ երեւեցաւ զառաջինն 'ի պանկալայ հնդկաստանի 'ի գիւղաքաղաքն Ջէսօր 'ի 1816 ամի տն. ապա և յայլ բազում տեղիս և 'ի քաղաքս հնդկաց աշխարհին. ոպ 'ի բումբայի, 'ի մատրաս, և յայլս մինչև 'ի բթավիայ և 'ի սմարան, և յայլ քաղաքս մալայի. նաև 'ի պասրայ, 'ի պաղտատ, 'ի բուշեռ, 'ի շիրազ, 'ի թէհրան, և յայլ քաղաքս պարսկաստանի։ և այս՝ ոչ իբր որում փոխադրական, այլ յապականեալ օդոյ ինչ պատճառեալ. որոյ ցարդ քննեալ 'ի ներհուն բժշկաց և բժշկապետաց անգղիացւոց ոչ գտաւ իսկութիւն պատճառին։ Միայն այսչափ ինչ ծանուցաւ իբրեւ ստոյգ. թէ 'ի յօդն գոյանայ ապականութի ինչ հակակիր մարդկային բնութե. ոչ ամ մարդոյ, այլ ոմանց. կամ մանաւանդ բազմաց. և չէ իսկ յայտնի թէ ո՛ր տեսակ մարդոյ, և ո՛ր բնութե է առաւել հակառակ. զի ամ հասակի և բնութեան և կազ֊

մու

մոռածոյ գրե թէ հաւասար պատահի. միայն թէ մանկանց և տղայոց ոչ տեսաւ պատահիլ այնպէս յաճախ. եթէ ոչ միում 'ի հազարաց։

Եւ որպ զանձն, նոյնպէս և զժամանակն ոչ գիտէ խտրել այս ցաւ. զի որպ յամառան և 'ի տօթագին եղանակս, նոյնպէս և 'ի ձմեռն և 'ի ցրտագին ժամանակս անխտիր երևի. բայց ընդ մեծի մասին յամառայնի 'ի ջերմագին եղանակս։

Այսմ ամի ականատես եմ ես ինքնին, որ բազում ամս շրջեցայ ընդ զօրս անգղիացւոց յաշխարհին Հնդկաց. և զամ դեղօրայսն, զօրս կանոնադրեցաք 'ի տետրակս առա, անձամբ 'ի գործ արկեալ. փորձ առեալ տեսի զօգտութիւնն. միայն թէ որչափ հնար է պարտ է շուտափոյթ 'ի գործ դնել առանց ժամ մի կամ րոպէ ընդ վայր անցուցանելոյ. ապա թէ ոչ՝ յանագանելն, ոչինչ օգտեն այնուհետև դեղքն. և 'ի զուր լինին աշխատանքն։

Պարձեալ յերևել ուրեք նշանի այսր ցաւոյ, պարտին բնակիչքն առ հասարակ զգուշանալ մութով. և ծխել 'ի բնակարանս իւրեանց զխունկ, կամ քացախ՝ արկել 'ի վերայ ջերմացուցեալ աղիւսի կամ ակուռի, և կամ այլ ինչ այսպիսի. այլև սակս հոտոտել զխսաոր, որպ և զսոխ քացախ. և ընդ ամ յստակ և մաքուր պահել զտեղիսն. այլև 'ի կարի տոթիկել հարկին, պարտ է փոխել զբնակարանն, կամ զտեղին, և դնել յայլուր հեռաւոր կամ մերձակայ, ուր մաքուր իցէ օդն։ զգուշանալ պարտ է և 'ի շըրջելոյ յարևու կամ 'ի տօթաժամու աւուրն. զի վնասակար է յոյժ։

Նոյն ոմանք՝ թէ յապականել օդոյն և յերևել ուրեք այսր ցաւոյ, թաշունք առ հասարակ

ան-

անյայտառական յայնմ տեղւոջէ․ սակայն ուստ է, զի ես ականատես եղեալ գիտեմ, որ ՚ի ժամանակի բուոյն սաստկութեան այսր ցաւոյ՝ թուչունք ձախըռեալ թռչէին յօդն ։

Այլ այն է ստոյգ թէ՝ այս ցաւ անսահման է, և անյայտ խոկումն որպիսութեան նր․ զի ոպ ասացաք յամենայն ժամանակս և յեղանակս տարւոյն, ամ հասակի և կազմուածոյ, և ը ամենայն տեղիս կարէ համբերել․ և ը անսահման գոլոյ ցաւոյն՝ անսահման են և դեղորայքն․ մեք զորս փորձեալ էաք անձամբ, և գործածութի զօգտութիւնն տեսեալ, զայնս եդաք աստանօր․ զորս թէ շուտափոյթ և ը եդեալ կանոնաց ՚ի գործ դիցէ ոք՝ կարեմ ասել թէ՝ անտարակոյս ազատի հիւանդն ։

Ասեն ևս ՚ի Հնդկաստան երկրական հմուտ բժիշկքն․ թէ զխանձահըն արկեալ ՚ի վարդի ջուրն, և տուեալ հիւանդին, օգտէ յոյժ․ զոր քանզի ես անձամբ չէի փորձեալ, վասն ոչ եդի ՚ի կարգի յիշատակեալ դեղոց՝ ՚ի տետրակի աստ․ այլ ում հաճոյ իցէ կարող է փորձել ։

Այսչափ ծանուցեալ, և զայն զայս տետրակ ՚ի պէտս և յօգուտ ազնուական համայնի եղբարցդ ջերմեռանդաբար ուղղեալ,

Մնամ

Ազնուականութեանց ձերոց

Խոնարհ ծառայ Բժիշկ Պօղոս
Աբրաշէանն Դաւիթեանց Կարբեցւոյ։
Ապար

Պատմութիւն և խրատ բժշկութեան ցաւոյն որոյ ծագելոյ 'ի հնդիկս և երևելոյ 'ի զանազան աշխարհս որ անուանեալ խոլէ

## Կոլերամորբս:

ԱՅՍ ցաւս ունի երեք տեսակ սկիզբն, կամ երեք կերպիւ կարէ յառաջանալ. առաջին կերպն է այն, որ յառաջ սկսանի յանկարծ ցաւել պորտն մարդոյ, կամ փորն շուրջ զպորտովն. ապա յետ քանի րոպէից, կամ սակաւ ժամանակի՝ սկսանի փսխել 'ի բերանոյն և լուծանել յորովայնէ անդադար մինչև 'ի վերջն, կամ մինչև 'ի մեռանելն հիւանդին:

Երկրորդ կերպն է այն, որ համարեա թէ բոլոր անդամքն՝ և մանաւանդ ձեռքն, և 'ի նոսա մատունքն, ևս և ոտքն, և 'ի նոսա առաւել սրունքն կամ ոլոքն, սկսանին յանկարծ կարկամիլ կամ քաշիլ մինչև յոյժ, համդերձ վերոյ գրեալ ցաւովն պորտոյն, բայց սակաւ քան զայն. ապա յետ սակաւ րոպէից անցանելոյ սկսանի հիւանդն նոյնպէս փսխել և լուծանել անդադար:

Երրորդ կերպն է՝ յորում մարդ յանկարծակի ուշաթափի և փռփռի, և շատ թուլանայ. և յետ քանի մի րոպէից նոյնպէս փսխէ և լուծանէ:

Արդ՝ յերիս կերպս յայսոսիկ, յորժամ սկսանի հիւանդն փսխել և լուծանել. յառաջին կամ յերկրորդ անդամն փսխէ և լուծանէ միայն ըզկերածն, և ապա հետ 'ի հետէ թէ փսխեալն և թէ լուծեալն փոխին 'ի պարզ ջուր. և միանգամայն

մայն բոպէ քան զբոպէ և ատոխձան քան զատոխ-
ձան առաւելու և սաստկանայ լուծումն և փըս-
խումն անդադար ։

Յորժամ այս այսպէս լինի, հիւանդն սաս-
տիկ ծարաւութիւն կրէ, և շատ ջերմութիւն կամ
տապքուն 'ի ներսն. որով յայրեցմանէ սրտին, ան-
դադար աղաղակէ և ջուր խնդրէ. յերեսաց գոյնն՝
և շրթունքն, որ է պռօշներն՝ առ հասարակ կապ-
տանան. որպ և ծայրք մատանցն ձեռաց. ոտքն և
ձեռքն շատ առաւել սառնանան քն պաղն. ունչ-
քըն կամ քիթն սրանայ և բարականայ. և 'ի բոլոր
մարմնոյն և յանդամոցն հոսին ամենասառն կամ
շատ պաղ քրտունք. զարկ բազկին, որ է նաբզն,
նուաղի յոյժ և թուլանայ այնքան, մինչև չլինիլ
զգալի, նուաղի կամ բարակի և ձայնն հիւանդին
այնքան, մինչև դժուարաւ լսէ մարդ. և արագ
շունչ առնլովն, կամ շուտ շուտ հևալովն հաղիւ
թէ պահէ զկենդանութիւն. այլև զանգատի հի-
ւանդն շատ վն ցաւոյ միջացն, և ոչ բնաւ գտանէ
հանգստութիւն յանկողնի իւրում ։

Եւ յայսմիկ ժմի որպ ասացաք, ոչ դադարէ
լուծումն և փսխումն՝ այլ հետ զհետէ առաւելու
և սաստկանայ. և վերջապէս լուծեալն քն փսխելն
փոխարկին 'ի գոյն արեան, և կամ 'ի գոյն ջրոյ
յորում լուացեալ լիցի միս. և եթէ դեղն ոչ արա-
գեսցէ, կամ շուտ չհասանի, յետ երեք կամ չորս
ժամուց կամ սհաթից արագի մահն, և ազատէ
զողորմելի հիւանդն 'ի ցաւոյն ։ և գիտել պարտ է.
որ այս ցաւս ոչ է փոխադրական կամ փոխվօղ,
որպ ժանտամահն է, և այլք այսպիսիք. այլ պատ-
ճառի անմիջապէս յապականութենէ ինչ օդոյ.

Որպ

նոր ատացաւ ՚ի յառաջադիմութեան:

Յետ մեռանելոյ հիւանդին. յորժամ բացցի որովայն նր և մասունք ներքին անդամոյն զննեսցին, ուղեղն գլխոյն, և խախայոցն, կամ ստամոքսն, և փորոտիքն ամ, ես առաւել թոքն և լեարդն գտանին լի յորդագոյն արեամբ. և աղիքն առ հասարակ փոխեալ ՚ի բնաւոր դըից իւրեանց:

Մարտ տեղ ի տարման այսպիսի հիւանդութեան է այս ինչ, զորս նշանակեմք ՚ի ներքոյ. զոր ի պարտ է շուտափոյթ ՚ի գործ դնել որքան հնարելին է:

Եթէ ցաւն լինի ը̄ առաջնոյն ՚ի վերոյ նշանակեալ երից կերպից՝ յորժամ հիւանդն նոր սկսանի վշտանալ կամ նեղանալ ՚ի ցաւոյ պորտոյն, պարտ է շուտով տալ ըմպել զներքոյ գրեալ դեղդ:

ընկալ

Աօձ կամ շաւ տորաղ . . . . . . աւլին մսխալ.
Ջուր Մելիսայի կամ աճխօնի . . . երեսուն կաթիլ.
Իւղ անանխոյ կամ նանէկի . տասն և հինգ կաթիլ:

Զայսոսիկ ՚ի միասին խառնել տուր ըմպել. բայց եթէ հիւանդն չկարասցէ պահել զայս դեղ, և զը-ցուեալ յետս դարձուսցէ, պարտ է կրկին տալ և երիցս, մինչև կարողասցի պահել: և այս դեղ օգտէ աստուծով և ազատէ հիւանդն:

Եթէ ցաւն իցէ ըստ երկրորդ կերպին, յորժամ անդամքն սկսանին կարկամել կամ քաշիլ՝ հանդերձ ցաւով որովայնին, կմ պորտոյն, պարտ է շուտով երակ հատանել, և արիւն թողուլ մինչև քառասուն կմ յիսուն մսխալ: ապա ՚ի վերոյգրեալ դեղոյն մատուցանել մի անգամ:

Եթէ

Եթէ ցաւն ըստ երրորդ կերպին լինի, յոր-ժամ հիւանդն սկսանի ուշաթափիլ և մրմռել և թուլանալ, պարտ է յերեսս հիւանդին յաճախ և շուտ շուտ սառն ջուր սրսկել. և կտաւ մի տո-գորեալ կամ թրջեալ սառն ջրով, դնել 'ի վերայ կրծիցն, և 'ի ջերմանալն՝ փոխել վերստին: այլև տուր հոտոտել զատորև գրեալ դեղն ոգելից կամ բաուհն՝ շուտ շուտ:

ընկալ

Անուշադր՝ որ է նիշադիր . . . . . Երեք բաժին:
Լաւ կիր . . . . . . . . . . . . . Մէկ բաժին:
Ջուր հասարակ կամ ըմպելի . . . . Երկու բաժին:

Զորս 'ի միասին լաւապէս խառնեալ, լից 'ի մէջ փոքրիկ շիշայի, և զբերանն պինդ փակել, 'ի հար-կաւորութեան ժամու 'ի գործ ածել:

Եթէ յայս երրորդ կերպն պատահեսցի և կարկամիլ կամ քաշվիլ անդամոցն՝ ընդ երկրորդ կեր-պին, յայնժամ պարտ է և երակ հատանել և ա-րեան թողուլ, որպէս գրեցաք 'ի վերոյ: և յետ 'ի յուշն գալոյն հիւանդին, տուր նաև 'ի վերայ գրել դեղոյն ռոմով, թերաքի ջրով և անանուխի իւ-ղով շինեալ:

Իսկ քանզի յայսպիսի սկարութեան, հիւան-դի սիրտն և ստամոքսն շատ անհանդարտ լինի. եթէ չկարողասցի ընկալնուլ դդեղն հեղուկ կամ ջրի, պարտ է յայնժամ տալ դեղահատ, կամ հաբ այսպիսի:

ընկալ

Կէլօճէլէնաս . . . . . . . . . Քսան ցորենաքաշ:
Ռփրատ որ է ափիոն . . . . . . Երկու ցորենաքաշ:
Իւղ անանուխոյ . . . . . . . Քառսն և հինգ կաթիլ:

Զորս

Զորս 'ի միասին խառնեալ հալք արա՛ և տո՛ւր , եթէ և զայն յետս դարձուցանէ հիւանդն , պարտ է կրկնել շատ անգամ մինչև կարողանայ պահել . Նաև պարտ է առնել հօշնայ այսու դեղորէիւք : ընկալ

Ջուր Բրնձի կամ Գարւոյ . . . . . քառասուն մսխալ:
Ջուր Ոխրատի կամ աքիծնի . . . . ևթնասուն կանկիլ:

Զորս խառնել 'ի միասին կէս ժամէ 'ի կէս ժամ հօշնայ արա՛:

Եթէ այս ամ̃ դեղորայք չօգտեսցեն ինչ . և ոչ դադարեսցի լուծումն և փսխումն հիւանդին . և տառնուլթիւն ձեռացն և ոտիցն առաւելասցի , և երեսն բոլորովին կապտասցի , և զարկ բազկին , կամ Նաբզին առաւել նուաղեսցի , յայնժամ շուտով պարտ է պատրաստել զջերմ կամ տաք ջուր . և դնել զհիւանդն 'ի մէջ ջրոյն բոլոր անձամբն մինչև 'ի պարանոցն կամ 'ի վերն Թաղեալ . և յամենայն կողմանց լաւապէս ծածկել , և պահել այնպէս մինչև քառն րոպէ , կամ սաղէթայ , եթէ հիւանդն կարողասցի տոկալ կամ դիմանալ . և եթէ ոչ , որքան կարէ այնքան մնասցէ 'ի ջուրն : սակայն մինչև 'ի պատրաստելն ջրոյն վասն բոլոր անձին , պարտ է շուտով պատրաստել զամկաւ տաք ջուր , և արկանել 'ի պօթիլկայս , և զայնս կապել 'ի մէջ ափից ձեռացն , և 'ի ներքոյ ոտիցն . և կամ աղիւս , որ է ախուռն կամ Թուղլայն՝ ջերմացուցանել , և պատատեալ կտաւով ինչ դնել 'ի նոյն տեղիսն :

Յետ հանելոյն 'ի ջրոյ զհիւանդն , պարտ է լաւապէս սրբել և մաքրել զբոլոր մարմինն , և այնպէս հանգուցանել յանկողնի կամ 'ի դօշակի իւրում՝ և ծածկել յամ̃ կողմանց . նաև Թէրլայի ջուր

քեղ

քսել 'ի վ̃ր ատամնաքսին 'ի դրսի կողմանէն, ութն մատնաչափ 'ի վեր քան զպորտն. որ թէ չօգտեսցէ ինչ՝ կ̃մ շատ չունիցի, պարտ է յայնժամ շպանցիկ մուխ կոչեցեալ դեղն մածուցանել կ̃մ կպցնել 'ի նոյն տեղւոյն. թողլով 'ի վերայն երբև ժամս քսան և չորս. այլև առնել հօղնայ այսու դեղօրէիւք։

ընկալ

ուշլանդ . . . . . . . . . . . . . . մին մսխալ։

տասալ ուշլանդ . . . . . տասն և հինգ ցորենաչափ։

Գարեջուր . . . . . . . . . . . ութսուն մսխալ։

Օյսպէսիկ 'ի միասին խառնեալ. յամէն կէս ժամու կամ սհաթի հօղնայ արա. ընդ նմին կլլնեմ և զվերոյգրեալ տաք ջուրն, թաղելով դարձեալ զհիւանդն մինչև 'ի վիզն. և պահելով 'ի ջուրն որքան կարասցէ մնալ, մինչև հանգարտեսցի ցաւն։

Իսկ զի հիւանդն ոչ առաջագ շատ ծարաւոյէ կրէ՝ և պապակի և ջուր խնդրէ, ոչ է պարտ տալ ջուր ամենևին, որ շատ վնաս է. այլ միայն սակաւ ինչ գարեջուր թոյլ տալ առնուլ 'ի բերանն և ողողեալ 'ի դուրս թափել։

Դարձեալ պատահի, որ յետ հանգարտելոյ հիւանդին և լաւանալոյն՝ միզարգել կամ գոցկապ լինի. որոյ դեղն այս է։

ընկալ

ուրխեշտ կամ մանանայ . . . . . . . . տասն մսխալ։

Գոլ ջուր . . . . . . . երեսուն երկու մսխալ։

և 'ի միասին խառնել տալ ըմպել. ընդ նմին սրմ և զվերոյգրեալ հօղնայն թխրաքի ջրով շինեալ՝ մի կամ երկու անգամ։ այլև կտաւ ինչ ստէպ նրմ շուտ շուտ տոգորեալ կամ թրջեալ 'ի ջերմ կամ 'ի տաք ջուր, դնել 'ի վ̃ր փորքամփորէն. և կամ զհե-

ւան

ւանդն նստեցուր ՚ի տակ ջուրն։

Նաև պատահի որ հիւանդն շուտ շուտ ձգու-
տայ . եթէ այն ձգուտալն չդադարի , սակաւ ինչ
լաւ գինի ջերմացո՛, և տուր որ ըմպէ, օգտէ և ա-
զատի աստուծով։

Նաև եթէ հիւանդն յետ լուալէս առողջա-
նալոյն՝ միայն թուլութիւն ունիցի, պարտ է տալ
յայնժամ՝ զդեղ զօրացուցանող . այս է մի մսխա-
լաչափ քինաքինայ գինեաւ խառնեալ . և կամ
այլ այսպիսի դառնահամ դեղ։

Իսկ կերակուր հիւանդին յամենայն ժամա-
նակս տկարութեան իւրոյ ոչ այլ ինչ պարտի լի-
նել, եթէ ոչ՝ խարշած ջուտի ջուրն . և հիմ՝ նշաս-
տայ, կամ սալապ եփեալ մատուսցի։

Գիտելիք ինչ վասն ոմանց դեղորէից։

Յոմանս ՚ի նշանակեալ դեղորէից գտանին կազ-
մեալք ՚ի զանազան դեղոց, զոր պարտէ ուսանիլ.
որպիսի է թիրաքի ջուրն , որ լատիներէն կոչի
գինդիւրաօքիայ։

ընկալ

Ներբաժ, կամ ափիոն . . . . . . քառն մսխալ.
Լուսաջոյն արաղ . . հարիւր քառն և ութն մսխալ.
Ջուր հորէն կամ ըմպելի . հարիւր քառն և ութն մսխալ։

Զայսոսիկ ՚ի միասին լուալէս խառնեալ ՚ի
մէջ պուտիկայի, դիցի յարևու առուրս տասն և
չորս . յետ այնորիկ քամեսցի թղթով, և զայն
քամեալ պարզ ջուրն արկեալ ՚ի պուտիկայն վե-

րը

բառին, 'ի գործ արկցի ըստ պիտոյին։

Այլև գոն գծագրայք ինչ, զորս անհնարին է կազմել․ զի կարօտին զանազան գործեաց, և հմտութե․ և այսպիսիք՝ ոչ և այլքն, ուր լինին դեղավաճառք կամ աբդերք, դիւրաւ գտանին առ նմ լատինական անուամբն․ իսկ ուր չիցեն դեղարանք կամ աբդերք, զանց արարեալ զնոքօք, միւսովքն նշանակեալ դեղօրէնւք պարտէ վարիլ․ և բաւական է։

անուանք ըստ լատինացւոց․

Ակէլօմիլաս․ որ է հիւծօծելոսն․ որ եղեառն է 'ի թէալքանի առա․ եւէ անհնար ինէ 'ի չեառս ճերել․ ճառանւան են մեառ ղեղոբայցն․ այլոխնքն աքիշոմն․ և իւղն անանխոյ։

Այնդօնեայ գարտոփիուլեայ, որ է ժինաժինայն յեշատանեալ 'ի թեաղանի առա։

Էմբլաստրոմ կէնթէռէտիս․ որ է շպանյի ճանճն․ այնէ ծանծ ողանիոյ․ ողեղանի եան ճահըան արան։

Օլէում մէնթէ բիպէրիդէ․ որ է իւղն անանխոյ։

Մաննայ, որ է ողիխշան։

ԱՒՐՏ.